ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

« 21 » մայիս 2019 թվական N 53

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐԱԳԱԾՈՏՆԻ ՄԱՐԶԻ ՓԱՐՊԻ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ ԻՇԽԱՆ ԲԱՋՄԱՍԵՐԻ ԱՌԱՔԵԼՅԱՆԻ ՆԿԱՏՄԱՄԲ ՎԱՐՉԱԿԱՆ ՏՈՒՅԺ ԿԻՐԱՌԵԼՈՒ ԵՎ ՊԵՏԱԿԱՆ ԳԵՈԴԵԶԻԱԿԱՆ ՑԱՆՑԻ N6536 ԿԵՏԻ ՎԵՐԱԿԱՆԳՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմին կողմից 2019 թվականի ապրիլի 30-ից մայիսի 3-ը ներառյալ ըստ անհրաժեշտության ստուգում է իրականացվել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնքում: Ստուգման արդյունքում պարզվել է, որ Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնքի վարչական տարածքում գտնվող Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնքի ղեկավարի պահպանությանը հանձնված պետական գեոդեզիական ցանցի N6536 հենանիշն ամբողջությամբ քանդված է, որի համար 2019 թվականի ապրիլի 30-ին կազմվել է գեոդեզիական կետի վնասման (ոչնչացման) մասին ակտ:

Խախտվել է «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 3-րդ հոդվածի 8-րդ կետով, 5-րդ հոդվածի 5-րդ մասի 4-րդ կետով, «Գեոդեզիայի և քարտեզագրության մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 7-րդ հոդվածի «դ» կետով, 16-րդ հոդվածի 4-րդ մասով, «Տեղական ինքնակառավարման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքի 43-րդ հոդվածի 2-րդ մասի 3-րդ կետով սահմանված պահանջները:

Հաշվի առնելով վերոգրյալը, հիմք ընդունելով Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի ղեկավարի 2019 թվականի մայիսի 13-ի N06-13-6 որոշումը և ղեկավարվելով «Վարչական իրավախախտումների վերաբերյալ» Հայաստանի Հանրապետության օրենսգրքի 95^2-րդ հոդվածով, «Հողերի օգտագործման և պահպանման նկատմամբ վերահսկողության մասին»

Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 16-րդ մասով սահմանված պահանջներով.

Ո Ր Ո Շ Ո Ւ Մ Ե Մ՝

1. Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնքի ղեկավար Իշխան Բազմասերի Առաքելյանի (ծնված՝ 24.11.1952թ., Հայաստանի Հանրապետության անձնագիր՝ AS0460349, տրված 13.12.2018թ., 029-ի կողմից) նկատմամբ կիրառել վարչական տույժ 50000 (հիսուն հազար) Հայաստանի Հանրապետության դրամի չափով, որը ենթակա է վճարման սույն որոշումը նրան հանձնելու օրվանից ոչ ուշ, քան 15 օրվա ընթացքում՝ պետական բյուջեի 900005001517 հաշվեհամարին (Հայաստանի Հանրապետության քաղաքաշինության, տեխնիկական և հրդեհային անվտանգության տեսչական մարմնի հաշվեհամարին):

2. Պարտավորեցնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնքի ղեկավար Իշխան Բազմասերի Առաքելյանին ողջամիտ ժամկետում վերականգնել քանդված (վնասված) պետական գեոդեզիական ցանցի N6536 կետը:

3. Սույն որոշումը երեք օրվա ընթացքում հանձնել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնքի ղեկավար Իշխան Բազմասերի Առաքելյանին:

4. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզի Փարպի համայնքի ղեկավար Իշխան Բազմասերի Առաքելյանին հանձնելու պահից, որը կարող է բողոքարկվել դատական կարգով՝ 30 օրվա ընթացքում:

5. Սույն որոշման կատարման նկատմաբ հսկողությունը հանձնարարել Հայաստանի Հանրապետության Արագածոտնի մարզպետարանի աշխատակազմի հողաշինության և հողօգտագործման բաժին-մարզային հողային պետական տեսչության պետին՝ Արայիկ Ռոմիկի Հակոբյանին:

Недействительная подпись

X

ԴԱՎԻԹ ԳԵՎՈՐԳՅԱՆ

Подписано: GEVORGYAN DAVIT 3203910713

ԳԵՎՈՐԳՅԱՆ